ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան « 28» 10 2014 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 27-Ա/Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թ. նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգով», հիմք ընդունելով ՀՀ կրթության և գիտության նախարարի 2014 թ. հուլիսի 25-ի N 764-Ա/Ք հրամանով ձևավորված մասնագիտական փորձագիտական խորհրդի եզրակացությունը և ելնելով բյուջետային հատկացումների ծավալից՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ու Մ Ե Մ

1. Հաստատել մրցութային կարգով ընտրված գիտական թեմաների ցանկն ըստ «Բնական գիտություններ» և «Ճարտարագիտություն և տեխնոլոգիաներ» բնագավառների՝ համաձայն հավելվածի:

2. ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի աշխատակազմի գիտական գործունեության կազմակերպման վարչությանը (պետ՝ Լ. Մարդոյան)՝ 10-օրյա ժամկետում մրցույթի արդյունքների մասին տեղեկացնել գիտական թեմաների և հայտերի ղեկավարներին:

3. ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնին (պետ՝ Տ.Գալստյան)՝ գիտական թեմաների ֆինանսավորումն սկսել 2014 թ. դեկտեմբերի 1-ից:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
ՀՀ ԿԳՆ ԳՊԿ նախագահի
28 հոկտեմբերի 2014 թ.
N 27- Ա/Ք հրամանի

Ցանկ
Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման երաշխավորված գիտական թեմաների

Բնական գիտություններ

N/N	թեմայի ծածկագիր	թեմայի ղեկավար	կազմակերպություն	գերատեսչություն
1	14AR-1c02	Երիցյան Հրանտ Նիկոլայի	Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)	ՀՀ կրթության և գիտության նախարարություն
2	14AR-1c04	Իվանյան Միքայել Իվանի	«Քենդլ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն
3	14AR-1f06	Հարությունյան Ռուբեն Միքայելի	Երևանի պետական համալսարան	ՀՀ կրթության և գիտության նախարարություն
4	14AR-1f09	Ղազարյան Գայանե Սուրենի	Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա

Ճարտարագիտություն և տեխնոլոգիա

N/N	թեմայի ծածկագիր	թեմայի ղեկավար	կազմակերպություն	գերատեսչություն
1	14AR-2f12	Մելիքյան Գոհար Շավարշի	Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան (Պոլիտեխնիկ)	ՀՀ կրթության և գիտության նախարարություն